ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» հուլիսի 2015 թ. N 168-Ա

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԽՈՏԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԽՈՏՀՆՁԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անտառների խոտածածկ տարածքներում 2015 թվականի առավել հրդեհավտանգ ժամանակաշրջանում հրդեհների կանխարգելման, ինչպես նաև անտառային հրդեհների առաջացման հնարավոր ռիսկերի մեղմման նպատակով.

Հրամայում եմ՝

1. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ. Մաթևոսյանին՝

1) առանց արգելքի, անվճար, թույլատրել գյուղացիական տնտեսություններին «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառների խոտածածկ տարածքներում իրականացնելու խոտհնձի աշխատանքներ.

2) ապահովել «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառներում և խոտածածկ տարածքներում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ